


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԵԱԿԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ

ՆԱԲԱՐԱԹԵՐԹ և ՁԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա ՏՐԱԿ, ԹԻՒ 12

ՆԻՒ ԵՈՐԳ, ՅՈՒՆԻՎԱՐ 29, 1898

ԳԻՆ 3 ՍԵՆՑ

ՎԵՐՋԻ ԾՆՆԴԵԱՆ ԶԱՆԴԵՍԸ

Հայ Աւետարանականաց Ս. Ծննդի տօնախմբութեան հանդէսը տեղի ունեցաւ ամսոյս 20ի երեկոյին Ասորմս Մէմօրիէլ եկեղեցոյ Մատրան մէջ, ի ներկայութեան 300ի չափ Հայ և այլ ազգի երկսեռ բազմութեան: Սրահին ճակատը զարդարուած էր անթառամ կանաչներով: Նուէրներով ծանրաբեռնուել երկու կողանցի ծառերն մասնաւոր ուշադրութիւնն կը գրաւէին—մանաւանդ անհամբեր տղայոց, որք բաղդատարար մեծ թիւ մը կը կազմէին այդ երեկոյ:

Հանդէսը բացուեցաւ Պատ. Ուսչինկիթը Զօթի նախագահութեամբ: Օր. ճօնս առաջին մասն ունէր յայտագրին վրայ: որչ նուագած քայլերգէն վերջ Պատ. Պարոնեան արթնք մ'ըրաւ ըսդ աւուր պատշաճի:

Պարոնիկ Բ. կատարեցան. յաջող դաշնակահարը, նուագեց ընհանեանի հօր հօր արան որ մեծ ընդունելութիւն գտաւ: Պատ. Յ. Սարկաւագեանի մեներգը, «Լոցեց ամպերը» խոր տալուորութիւն ձգեց հանդիսականաց վրայ, որոց որոտագին ծափահարութեանց ի պատասխանի Պատուելին երգեց նաև մի ուրիշ երգ որ նմանապէս գնահատուեցաւ ժողովրդէն:

Պատ. Զօթ նիւթ ունենալով «Մընունդը» հակիրճ բանախօսութիւն մը ըրաւ, իհարկէ Անգլիկներէն լիզուով: Ի մէջ այլոց բարի գալուստ մաղթեց Հայոց որք տառապանաց ու բռնութեան աշխարհէն եկած էին ապաստան գտնել աղատ և Բրիտանիայ Միացեալ Նահանգաց մէջ:

Տիկին Բուրին, համբաւեալ որ դաշնածուն, յաջորդեց Պատ. Զօթին, որ անցեց Ռայնէլի կտորներէն մին մեծ ճարտարութեամբ: Բայց Պարոնիկ կոստիկեանի «հօր հօրը» աւելի մեծ տալուորութիւն գործած էր Հայոց վրայ, որոց շատերուն ո՛չ Ռայնէլի ծանօթ էր և ոչ անոր բարձր նուագներն, բայց այսու հանդերձ վարպետ Տիկինն բուն ծափահարութեամբ վարձատրուեցաւ:

Պատ. Սարկաւագեան երգեց նորէն. իր տխուր Մայր Արաքսին ժողովուրդը յուզեց իսրախ: Մեր Արաքսի Ափերուն չափ ի՞նչ կայ յուզիչ եղանակ Հայերուս համար:

Նախագահն այս պահուս սարկաւագեանի լինելով մեկնել, Պատ. Սանգիլեան, որ պատահամբ ներկայ գտնուած էր, հրաւիրուեցաւ Պատ. Զօթին տեղը բռնել: Հանդիսի մնացեալ մասին համար: Պատ. Սանգիլեան իր զուարճալի բառախաղերով համեմեց հանդէսն:

Պատ. Պէննէեանի «ոյժն էր որ կէս ժամէ աւելի ժողովրդի ուշադր-

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արջին ակուններն ու թուրքը— Պապը հանրապետութեան փափաքող— Բիւպայ և Միացեալ Նահանգներն— Հակա-Հրէական շարժում ի Փարիզ— Յամառ թուրքն ու վախկոտ Լնքը Սամը— Դժուարութիւն ի Պարսկաստան— Չախարհ խաղաղացներու մէկ կերպը— Հէրալտի առաքելութիւնը:

Հիւսիսային արջը ակունները ցուցնել սկսեց Տաճկին: Անցեալ շաբթու երբ Սուլթանը ունկնդրութիւն մը շնորհեց Ռուսական Դեսպան Պ. Ջինովիչիֆի, այս վերջինս ըսած է պարզապէս թէ Սուլթանը եթէ չի հաճի Յունաստանի Գէորգ Ղազարեանի կառավարիչ անուանել, Ռուսիայ կը րէտէն Յունաստանի տրուել պիտի առաջարկէ: սակայն Սուլթանը կերևի թէ չի վախնար: Ջինովիչն ինչորոյ մեծնալը յատ ուրախութիւն կը պատճառէ իրեն: Այս մասին կարելի էր լուր մը չկայ այժմ, միայն թէ Անգլիա կուզէ 50 միլիոն օսկի փոխ տալ Ջինաստանի 4 առ հարիւր տոկոսով, 50 տարիէն վճարելի, պայմանաւ որ անոր փոխարէնն Ջինովիչն կառավարութիւն հողային տուրքը Անգլիոյ տայ յապահովութիւն, Ջինովիչն կառավարութեան մէջ կարեւոր փոփոխութիւններ մտաւորն, երեք նոր նաւահանգիստներ բացուին, Եօնք թոյ Բիսիակ Գաւառին և ոչ մի մասը օտար Տէրութեան մը տրուի, և Յունանի երկաթուղեաց շինութեան մենաշնորհը Անգլիոյ յանձնուի:

Հռոմի Ջիվիթա Բաթիլիքա լրագրիւրը, որ վատիկանի պաշտօնական բերանն է, նոր տարիին որը առաջնորդող յօդուածով մը կ'առաջարկէ որ Իտալիան հասարակապետութիւն ըլլայ, ու Պապը հաշտուի ժողովրդի հետ: կը կարծուի թէ այս յօդուած Պապին արտաքին գործոց պաշտօնէին, կարտինալ Բամբոլոյի կողմէ գրուած է: Բաղաքական աշխարհը զարմացաւ այս մասին, ու Իտալական Վեհաժողովի անդամներէն մին, Սինիօր Չանուրուլլի առաջարկեց որ Բաղաքական ատենի առջև վատիկանի դէմ գանգատ մ'ըլլայ այս մասին:

Հավանայի մէջ Սպանիացի ժողովուրդը, որ մեծաւ մասամբ խանութպաններէ ու վաճառականներէ կը բաղկանայ, երկու շաբաթէ ի վեր յուզման մէջ է: Ասոնք կը բողոքեն Բիւպայի տրուելիք ինքնիշխանութեան հէմ: Կը կարծուի թէ կ'ըլլին նոր նախարարութիւնը Սպանիայէ եկած արմաքներու վրայ ծանր մարտ պիտի դնէ, և ուրիշ երկիրներու, մանաւանդ Միացեալ Նահանգաց հետ նոր դաշնագրութիւններ պիտի կնքէ:

Սպանիացիք կը վախնան թէ պիտի վնասուին ասկէ: Ամերիկեան Հիւպատոսը և Հիւպատոսարանն վտանգի մէջ են. և թէ և սեղույս լրագրիւրներն մեծ աղմուկ հանեցին, սակայն կառավարութիւնն իր չէզոք վիճակն պահեց, միայն զբաւար մը, Մէյնը: Ղրկեց Հավանայ:

Ի Փարիզ երբ զինուորական ատենն աղատ արձակեց Եփեսոսի հրամանատարն, Տրէյֆուզի կողմնակիցներէն քանի մը ծանօթ անձինք, ի մասնաւորի Էմիլ Զօլա, հասարակապետութեան նախագահին մի բողոքազիր մատուցին՝ որով կը պահանջեն վերաքննութիւն Տրէյֆուզի դատին, առարկելով թէ զինուորական ատենան անարդարութիւն գործած էր: Այս մասին Վեհաժողովը որոշեց որ կառավարութիւնն Զօլայի դէմ դառնայ Գաղղիական միջոցի գորավարներու դէմ ըրած զրպարտութեանց համար: Այս որոշման հետևանքն եղաւ անցեալ շաբթուին Հակա-Հրէական ցոյցն ի Փարիզ: Գիվոլի Վօթօնի մէջ մեծ ժողով մը տեղի ունեցաւ, որուն կը նախագահէին Բօլֆօն և Տիւմօն, բայց արմատականաց ներկայութիւնն խանգարեց գումարուան, ու ժողովը ցրուեցաւ: Ուսանողներն խմբակներով փողոցները շրջեցան «կեցցէ՛ բանակը, անցին Հըրէայը, Զօլայի երեսը թքէք» ևն. կոչելով:

Բաղաքիս Իվնիկ Փօսթ լրագրի թղթակիցն նախագահ Մաք Բիւլիի բարեկամներէ մեկին հետ տեսակցութիւն մը ունեցաւ վերջերս Տաճկական կառավարութեան Միացեալ Նահանգաց վճարելիք տուգանքի խնդրոյ մասին: Այս վերջինս յայտարարած է թէ այդ պահանջն գանձելու համար Միացեալ Նահանգք չեն կրնար խիստ միջոցներու դիմել: Երեք միջոցներ կան, ըսած է յիշեալն, այս պիտի պարագաներու մէջ տուգանք մը գանձելու համար: Առաջինն է Պօլսոյ Ամերիկեան Դեսպանն ետ կանչել ու խզել ամէն Բաղաքական յարաբերութիւն թուրք կառավարութեան հետ: երկրորդը՝ նաւահանգիստ քաղաք մը ուժեղացնել, և երրորդը՝ նաւահանգիստ մը զինու զօրութեամբ գրաւել ու տուրքերն հաւաքելով՝ այդու Միացեալ Նահանգաց պահանջը գանձած ըլլալ:

Նախագահին բարեկամը, որ քաղաքական շրջաններու մէջ նշանաւոր մէկը ըլլալ կը կարծուի, ասոնց մին անօգուտ և միւսներն ալ այլ և այլ պատճառներով անկարելի կը նկատէ: Այս առարկութեանց պատասխանող երկու նամակներ հրատարակուեցան նոյն լրագրիւն մէջ, որոց հեղինակներն

ըն հակառակը կը պնդեն բազմակողմանի փաստերով: Սոցա մին մէջ կը բերէ Պուլտուրի դէպքը, որոյ առթիւ Ամերիկացիք երկու մարտանաւ ղրկելով Զմիւռնիա պահանջուած գումարը գանձեցին անմիջապէս: Ինչպէս որ Աւստրիայ վերջերս սպառնացաւ Մերսինը ուժեղացնել, ու իր պահանջներուն զոհացում գտաւ, կը ըսէ մէկ նամակագիրը, այդպէս ալ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն, եթէ համարձակի աղբու միջոցներու դիմել, խնդիրն կը լուծուի շուտով:

Լօնտոնէն կիմանանք թէ խոսվութիւն կայ Պարսկաստանի մէջ: Արդի Շահը ժողովուրդէն սիրուած չէ. և իրաց վիճակը այնչափ վտանգաւոր է որ վայրկեան վայրկեան կառավարական անկում մը կապասուի թէ հրանի մէջ: Պարսիկներն Անգլիայի հետագրական պաշտօնակալ մը ըստ պահանջ են վերջերս, և այդ պատճառաւ Հնդկաստանէն զօրք պիտուած է Պարսից Ծոցը, որպէս զի ի հարկին պատրաստ գտնուին: Արդեօք այս տեսնելով Ռուսն ալ գէպի Ռորասան չի՞ յառաջանար: Մի քանի շաբաթէն կ'անկեալներ շատ մը նոր ու զարմանալի դէպքեր լսել:

Վիէնայէն կը հաղորդեն թէ Փրորօֆ. Չէնք մեծ գաղտնիք մը գտած է: Այս գիւտ եթէ իրաւ է, կրնայ որ մը հանդարտեցնել քաղաքական աշխարհի տագնապն, որ վերջ չունի ներկայ դրութեան տակ: Փրօֆ. Չէնք կըսուի թէ գտած է միջոցն որով ծնողք, ըսդ հաճոյց պիտի կըրնան աղջիկ կամ մանչ զաւակ ունենալ: Մարդիկ ջանալու են որ կրնան բազմանան ու զաշխարհ կառավարեն, վասն զի եթէ իշխանութեանց ղէկն անոնց ձեռքն անցնի, այսչափ կրու ու խռովութիւն չի մնար երկրագնդիս ազգերուն մէջ տեղ:

Նիւ Եօրք Հէրլո—քաղաքիս փալատի կտորը—գիւտ կը շարունակէ հըրատարակել Պատ. Հէփուարտի նամակներն. սոքա ընդհանրապէս ճամբորդութեան պարզ նկարագիրներ կրնան նկատուիլ, եթէ Հայերը անուանարկելու ոգին պակի անոնց մէջ: Պատուելին իրր դիւցազներգութիւն մը կը ջանայ ներկայացնել իր այս ճամբորդութիւններն, պնդելով թէ իր անցած ճամբաներէն ուրիշ եւրոպացի մահկանացու մը՝ դժբաղդութիւն չէ ունեցած անցնիլ տակաւին(?) մասնաւոր ձմեռ ժամանակ:

Ջիւնին ու փուլին Հայաստանի մէջ ճամբորդել... ի՞նչ մեծ գործ...



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Կը Հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱԳԵՏ.

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	Տարեկան 10 Փրանք.
Տարեկան	Տարեկան	
Վեցամսեայ	Բաժանորդագրին ԿԱՆՈՒԿ վճարելի է միայն:	
Յոսամսեայ		

Մտար կամ նամակ ուղղել Հնտեւեալ Հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՈՒ ԵՈՒԲ, ՇԱՐԱԹ, ՅՈՒՆՎԱՐ 29 1898.

ՓՐՈՎԻՏԷՆՍԻՆ ԱՐՁԱԳԱՆԲ

25 Յունվ. 'ի Փրովիտէնս.

Խմբագիր ՏԻԳՐԻՍ

Ազգային ընդհանուր որոնց օգնելու նպատակաւ թերթի միջոցաւ յայտնուած գաղափարներն, ուրախ եմ որ Հետզհետէ կ'ընդհանրանան և գործնական ուղղութեան մը մէջ մտնելու երեւոյթը կ'առնեն:

Վերահազէթի քառասուն Հայէ բաղկացեալ գաղութը պարզ հրաւերի մը վրայ, երեք առանձին եօթնակ խմբակներ կազմեց, որոնց առաջին խմբակն իւր պարտականութիւնն կատարեց, անվիշապէս յանձնելով ինձ 25 Տօլ. 55սթ. զրկելու համար Ազգ. Պատրիարքարան, որպէսզի ներկայ տարուոյ մէջ, յանուն իրենց որը մը պահով: Իսկ միւս երկու խումբերը տարուոյ սկիզբէն օրական մէկ մէկ սէնթ յանուն որոնց յատկացնելով կը շարունակեն:

Ուրախ եմ զայս աւետելու, և յուսով եմ որ պիտի գտնուին բազմաթիւ Ազգայիններ, մերկ և անպատասպար հազարաւոր անմեղ որոնց աչաց արտասուքը սրբող և անոց սըրտանուէր օրհնաբազը լող:

Հրաւեր կարգադրեց ՏԻԳՐԻՍԻ միջոցաւ և ահա ժամանակ ընդունելի, և ահա օր փրկութեան:

Կարողութիւն ձեզ և զգաստութիւն անտարբեր Հայերու որոնց համար անձայն կը սիրէ աշխատիլ
ՎԱՂԻՆԱԿ. Վ. Վ. ՍԻՍԱԿԵԱՆ

ԱԶԱՏ ԼՍԱՐՍԱՆ

Ուրախութեամբ կ'աւետեմք Հայ ազատ Լսարանի գալուստը զոր կապատուէր երկար ատենէ ի վեր: Կրօնական ու կուսակցական ամէն նկատումներէ ազատ և անկախ այսպիսի ձեռնարկ մը ազգային կեանքի եկեղեցին է. զայն քաջակերելն ու անոր ժողովներուն ներկայ գտնուիլն կրնայ առաքելութիւն մը նկատուիլ:

Մասնաւոր շնորհակալութեան արժանի են այս լսարանի հիմնադիրք, որոնց մէջ հրապարակի վրայ ծանօթ են Տիարք Զիթճեան և Գ. Զլուգճեան:

Ուսուցանելու կարող ազգայինք պարտաւոր են այս միջոցաւ՝ առանց հրաւերի ու կոչման՝ առիթ տալ ժողովրդեան օգտուելու իրենց գիտութիւնէն:

Յաւ է ըսել թէ մեր ժողովրդի միտքն՝ հակառակ ամէն տեղական դիւրութեանց՝ դեռ անմշակ կը մնայ հոս. անմեղք ու անձնուէր մշակներու խոփ ու արօրին պէտք կայ այս խոսկանացեալ բարոյական աշխարհը մշակելու համար:

Ն Ա Բ Ե Բ Ա Ն Ե Ր

Պարբերաներու աշխարհին մէջ կարգ մը հայեր սկսած են մեծ դեր խաղալ. Մասաչուսէթի կողմերն շատ մը նորեկ ու տեղական լեզուի անձանթ ազգայիններ կը կեղեքուին ասոնցմէ: Բողոքներ կը լսենք շատ մը քաղաքներէ այսպիսիներու դէմ: Չըսիլի մէջ կը վերջերս Ջայու մը դժբաղութեան պատճառ եղած է, Բրենն շահաւոր գործ մը գտնելու պատրուակաւ, կեղեքելով ու այլուր փոխադրելով զայն:

Այսպիսի խաբեքներու օրէնքին յանձնելու է, հոգ չէ թէ Հայ են. Հայ ազգը այսպիսիները Հայ չի նկատեր, անոնք խաբեքաներու ազգին կը վերաբերին:

ԵԿԵՂԵՑԻ ԾԻՆՈՒԹԻՒՆ

Ուէսթ Զօպօքնի մէջ եկեղեցի մը կառուցանելու խնդիրն ընդհանուր ուշադրութիւն գրաւած է Հայ գաղթականութեան մէջ: Այս մասին շատ մը նամակներ ստացած ենք վերջ երս, որոնցմէ շատերը ոչ միայն աւելորդ, այլ նաև

վնասակար ձեռնարկ մը կը նկատեն այս: Սա նամակներ հարկաւ չենք կրնար ամբողջութեամբ հրատարակել, տեղի անձ կու թեան պատճառով, բայց յաջորդ թուէն սկսելով մէկ քանիները պիտի հրատարակենք, և առիթ պիտի տանք անոնց, որոնք եկեղեցի մը շինելու գաղափարին ջատագով կը հանգիստանան, իրենց փաստերն ևս ներկայիս ժողովրդին: Այս առիթը ըսենք թէ երկար թղթակցութիւններն կամ պիտի մերժենք և կամ պիտի համառօտենք, որպէսզի կարող ըլլանք ամեն լուրը գործներու առիթ տալ՝ իրենց թեր ու դէմ փաստերն ներկայացնելու համար: Կը յուսանք որ այս վիճաբանութիւնը պիտի ունենայ իւր օգուտները:

ՍԵՓՀԱԿԱՆ ՍՐԱՀԻ ՄԸ ՊԵՏԻԸ

Գաղաքիս մէջ տարին առնուազն հարիւր ազգային ժողովներ տեղի կու նենան այլ և այլ ժողովարարներու մէջ, որոնց համար վարձք կը վճարուի տարին \$350.00 չափ: Հաւատակ այս շուայլ ծախքին դեռ սեփական սրահ մը չունենցանք. Հ. Ե. Թանգարանի Միութիւնն, գրքերն ի ձեռին դեռ կը դեգերի տունէ ի տուն, և միւս ընկերութիւններ չունին հաստատուն կեդրոնատեղի մը որ միայն իրենց արձա՛ղութեան տակ եղած ըլլար: Սակայն ասանք ամէն ձեռն առանձին վճարուած վարձքերն բաւական են յատուկ սրահ մը վարձելու ամէն օրուայ և ամէն գիշերուան համար: Այս ընկերութիւններն արդարեւ անկարելի է միացնել, բայց անոնց վճարած այս գումարներն ինչո՞ւ չեն կրնար իրար բերուիլ լաւագոյն կերպիւ մը գործածուելու համար: Փրովիտէսի ու Լօրէնսի Հայերն սեփական սրահներ վարձելով ո՛չ միայն նիւթապէս խնայողութիւն մը ըրած են, այլ և բարոյապէս օգտուած են անոնց գործածութեամբ, ուր ոչ միայն կրօնական սրտամուտք կը կատարուին ու ազգային ժողովներ տեղի կու նենան, այլ և թանգարան ու գրադարան բաց կը պահուին ժողովրդին առջև: Ինչ արժէք ունին մեր թանգարանի պատուական հաստոյններն երբ հոս ու հոն փոշիներու տակ կը ննջեն անչարժ: Սեփական սրահ մ'ունենանք:

ՈՐԲԵՐՆ ՀՈՍ ԲԵՐՈՒԻՆ

Ուսիթընէն շատ ուրախալի և միևնոյն ժամանակ տխուր լուր մը կը կարգանք. տեղական գրադարանի օժանդակ մասնախումբի անդամուհիները սկսած են մայրական յատուկ փափկասրտութիւնով մը, հետաքրքրուիլ հազարաւոր որբերու ամենակենսական հարցով: Օ՛հ, շատ միտիթարական է երեւոյթը, Հայ տիկիներ, բացի տեղական խնայողներու ժողովներու մասնակցելէ, հրապարակ եկած են, իրենց մայրական գիթը ձեռքերով ազատելու հայ որբերէն գէթ մէկ քանին թշուառութեան անդունդէն:

Մասնաւոր խնդակցութեան և շնորհակալութեան արժանի այս տիկիները թող չը վիրաւորուին, եթէ ըսենք թէ, որքան որ հրճուանքով կ'ողջունենք իրենց հանրային խնդիրներու մէջ ցոյց տուած գործունէութեան ոգին, նոյնչափ ուրախալի և օգտակար չէ իրենց այն ձեւը, որով որոշած են իրենց վերջին ժողովին մէջ, օգնելու համար որբերուն: Տիկիները որոշած են գոյացնելու նիւթական ոյժ մը որով կըրնան գոնէ մէկ քանի որբեր Հայաստանէն Ամերիկայ բերել տալով, պահել ու կրթել:

Մայրական սրտի յատուկ գործով մըն է որ Տիկիները կը փափաքին Հայ որբերը իրենց աչքի ու անմիջական խնամքին տակ ըլլան, թերևս ոմանց ակ տուններուն մէջ, սակայն մենք կըսենք թէ, որբերը հոս բերելը վերին աստիճանի սխալ և վնասակար ձեւ մըն է փրկելու համար գանձեց թշուառութենէ: Շատ աւելի իրական և օգտակար օգնութիւն մը ըրած պիտի ըլլան Ուսիթընի Հայ Տիկիները եթէ անոն ջանք ընեն, և նիւթական որոշ օգնութիւնով մը որոշ թուով որբեր պահեն Հայաստանի մէջ: Նախ որ, առնուազն իւրաքանչիւր որբի համար հարկ եղած ճանապարհի ծախքով կարելի է գինքը տարիէն աւելի պահել մայր երկրին մէջ. եւ յետոյ, ինչ գրական երաշխաւորութիւն ունին Տիկիները որ օր մը իրենց բերել տուած որբը չը մատնուի օտարանալու վտանգին, քանի որ այդ պղտիկները, եթէ կուզեն կըրթել, պիտի յանձնեն ամերիկեան վարժարանները. երեւակայեցէք որ իրենց մայրենի լեզուն թոթովող այդ աղջիկները կամ տղաքները պիտի ստիպուին լիզիլն և ձօնին դասակիցներ և խաղակիցներ ըլլալու: Մենք չենք կարծեր որ Ամերիկայի մէջ կան այն տեսակ Հայ ընտանիքներ որոնք ամեն դիւրութիւնները և յարմարութիւնները ունին Հայ օրիորդներու և տղաներու նախ կատարեալ Հայկական դաստիարակութիւն մը տալ:

Աղջիկ Տիկիներ Բարակեանը և իւր պաշտօնակիցները աւելի օգտակար պիտի ըլլան որբերուն, եթէ փութան եղած տեղերնին ազատել զանոնք անթութեանէն. և պահել որբանոցի մը մէջ: Իսկ եթէ կը խորհին որ չար օր մը Թուրքի և Բուրտի սուրը կը մորթէ զանոնք, է՛յ, ինչ ընենք, այս արհաւիրքէն կարուած է հազարաւորներու կեանքը:

Ի՞նչ երկարեցէք ձեռք մայրական ձեռքերը դէպի որբացած թշուառ Էսկիները, բայց կրկին մի որբացնէք զանոնք. մի խէք զանոնք իրենց հարազատ մօր — Հայր Մայրենիքի — կուրծքէն:

ՀԱՅ ԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱՄԵՆԵՐ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ

Վերջին չորս տարիներու մէջ Հայաստանի մէջ մին միւսին յաջորդող խժժութիւններն և կոտորածները դեռ ևս մոռացութեան տրուած չեն:

Հայք կը յիշեն զայնս արդար բարկութեամբ ու վրէժխնդրութեան բռուն հոգով: Սուլթան կը մտաբերէ զայն իբր ապագային իւր թափախ կործանման սպառնացող դէպքերէն մին:

Եւրոպիոյ տիրապետական մարմիններն կը նկատեն զայն իբր իրենանց գերահռչակ ներդաշնակութեան(?) վրդովում սպառնացող պատահար մը:

Արդ Սուլթանն և Տէրութեանց զեսպանք ըստ կարելոյն կը ջանան յեղաշրջել այն ազդեցութիւնն որ կոտորածներն թողած են հասարակաց մտքին վրայ թէ՛ Եւրոպայ և թէ՛ յԱմերիկայ:

Սյոք իսկ դիտաւորութեամբ Եւրոպիոյ քաղաքական ներկայացուցիչք ի Թուրքիայ կը սքնին գունաւորել Հայկական ջարդերն, պատասխանատուութիւնն ասոր և անոր կռնակն թեոյցներով:

Նոյնը կընէ Սուլթանը: Նիւ Եօքք Հէրալտի թղթակիցն կայսերական ծախքով կը շրջի Հայաստանի մէջ, ջարդի պատասխանատուներն գտնալու: Հէրալտի թղթակցի որ աստիճանի կամ մարդ լինին երբէք արժէք կամ կընդ չունին, զի Թուրքիոյ և նորա կառավարութեան ծանօթ եղող մը գիտէ թէ այդ երկրի մէջ ուր սուսը կը սիրապետէ, ճշմարտութիւնը երեւան բերել ոչ մարդու լաւութենէն, այլ պարագաներէն կարուած են: Ահա պարագաներն որ կը ընկերակցին Հէրալտի թղթակցին. Ա. երկրի լեզուներէն և ոչ մին ծանօթ է նմա. Բ. կը ժողովրդեաց Սուլթանի հրաւիրանք. Գ. նմա կ'ընկերակցին Թուրք պաշտօնական անձինք Սուլթանէ կարուած իբր թարգման և ուղեցոյց. Դ. Թուրք պաշտօնականներու ներկայութեան ոչ սք կը համարձակի խօսիլ ճշմարտութիւն:

Հետեւաբար և ոչ մի Հայ կ'սկընկալէ իրողութիւններու նշոյններ տեսնել Հէրալտի էջերու մէջ Հայկական ջարդերու մասին: Հանդէպ այս իրողութեանց զայրութեամբ կը լեցուին մեր սրտեր:

Մինչ այսպէս մեր արտաքին թըշնամիներն չորից կողմանց կը տանջեն մեր արդէն իսկ վիրաւորուած սիրտն, տեսնեմք թէ ինչ է մեր բըռնած ընթացքն:

Վերջերս իրենց թաքստոցէն դուրս են սարդեր սև օրուայ համար պահուած փաստաբանի գրիչներ, որոնք առանց արեան յեղափոխութիւն և առանց զոհի փրկութիւն կը քարոզեն: Սուքա եռանդեամբ կ'աշխատին ապացուցանել թէ Հայկական ջարդերն Հայ Յեղափոխականներու երեսէն տեղի ունեցան (նոյն կասէ և Սուլթան), հետեւաբար Հայք պարտին հեռանալ գործող Յեղափոխականներէ՝ պահելով Յեղափոխական անունը: Թէ ինչու կ'առաջարկեն պահել Յեղափոխական անունը, շատ մը մեկնութիւններ կուտան այլք, իսկ իմ կարծիքս է թէ սոյն անգին Յեղափոխականաց գիտաւորութիւնն է իսպառ ջնջել յեղափոխութեան գաղափարն Հայ ազգի մէջէն, սակայն դիտակ լինելով ժողովրդի յեղափոխական միտմանց՝ կը ջանան քայլ առ քայլ բերել զայն այդ դիրքին:

Փաստերն որով սոքա կը բազման սպացուցանել թէ Հայկական կոտորածներու պատճառն յեղափոխականք եղան, տղայական են և առանց հիման. իսկ աստ յառաջ կը բերեմ ի-

քննութիւն: Օրինակ՝ սոքա Տրապիզոնի ջրաբեր կամար կասեմ «երկու յեղափոխականներ ատրճանակ պարպեցին Պահրիի վրայ, և այս պատճառաւ եղաւ Տրապիզոնի կոտորածն, որն կերպարանափոխուեցաւ ընդհանուր ջրաբերի ինքնաբերական գաւառ»: Իսկ վան, որընդհանուր կոտորածէն զերծած էր, բազմակից եղաւ այլ Հայ քաղաքացի մի տարի վերջ: Գրչի յեղափոխականաց պարտքն էր պատճառ մը ևս ասոր ճարել, և ճարեցին: Ի լոնտոն հրատարակուող յեղափոխական Հայ թերթէ մը կ'ընեմ հետեւեալ քաղուածն՝ «Համբիւն այս տեղ է ուղարկել թի յատուկ պատգամաւոր, որպէսզի բանակցի Հայ յեղափոխականներին հետ և «ընդարձակ լարենորոգումներ» մտցնելու ամեն խօստուհներ անի ուղղակի մեզ Սուլթանի կողմից: Ենթադրելով մեր կողմից էլ դրա փոխարէն հրատարակել յեղափոխական քարոզներին: Հա՛, Հա՛, պառու աղուէսն այնքան էլ խորամանկ չէ որքան վախկոտ, այնքան էլ ճարպիկ չէ որքան անճարակ: Թող երթայ նա իւր ճամբով...: Մենք մեր կողմից լաւ դիտենք աղուէսի թափերն յեղափոխական թակարդի մէջ պինդ բռնել ու սեղմել»: Սոյն քաղուածն ընելէն վերջ մեր ճարպիկ գրչամարտիկներ կ'անեն «Այս արհամարհոտ սպառնալիքը երբ պայթեցաւ, քիչ ետքն ալ պայթեցաւ բոթ մը, վանի մտքս ան հազար Հայու կոտորածի գուժը, և իրարու յաջորդեցին Պոլսոյ ահեղ ջրաբեր, Ակնայ և Եւզոկիոյ կոտորածներն՝ առանց հաշուելու հոս հոն հարիւրաւոր, հազարաւոր Հայերու առանձին առանձին սպանութիւններն՝ «Թող երթայ նա իւր ճամբով», գնաց ու խօսքերին մտիկ ըրաւ՝ կոտորել առաւ Հայերը»: (Շարունակելի) Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

ՎԵՐՁԻ ԾՆԵՆԻՆԱՆ ՀԱՆԴԵՍԸ

(Շարունակութիւն առաջին կրկնէն)

ընթացքն զբաւեց: Յաջող ատենաբանն լաւ բացատրեց իր նիւթն, «ոյժ» մեծ ոյժով ներկայացնելով ունկնդիր հանդիսականաց:

Տիկին Բուրին նորէն նուագեց բարձր կոտոր մը դաշնակի վրայ. ասոր յաջորդէն եղաւ Փրօֆ. Տու Պուա ուր թէնոր մը երգեց իր հզօր ձայնով:

Օրը ձօնս նորէն նուագեց դաշնակի վրայ, և Պարոնիկ Կոտորիկան ուրիշ կերպով մը նուագով հանդէսն:

Նուէրներու բաշխումն սեղի ունեցաւ անմիջապէս վերջ: Պատ. Սաղաթեան և Տքթ. Սիւնի բաժանարարի պաշտօն կատարեցին:

Ժամը 11 մօտ էր երբ ժողովուրդը յորտէլ սկսեց, գոհ սպաւորութեան տակ, մանաւանդ պղտիկներն որոց համար ի հարկէ ամենէ փառաւոր ու զուարճալի հանդէսն եղաւ այս:

—Շարթուս մէջ քանի մը Բերրիցի ազգայիններէ բաց ստորագրութեան տակ հրատարակուելու համար նամակներ ընդունած ենք, որք կը հաստատեն Ըսթէմֆօրանէ Ձ. Ա. Բ. ի հաղորդած այն լուրն թէ Գ. Ս. անուն անձն իր անվայել ընթացից համար արտաքուստ է Բերրիցեաց ընկերութենէն: Նամակագիրք այս առթիւ մէջ կը բերեն շատ մը մանրամասնութիւններ ևս, զորս հարկ չենք սեպեր հրատարակել, միայն կրնանք, վստահելով մեր թղթակցաց գրածներուն ըսել թէ այս խնդրի մէջ Գ. Ս. ապացոյցներ չունի ինքզինքն արդարացիելու համար: Այս միջադէպ գոցուծ նկատելով, այդ մասին ուրիշ թղթակցութիւններ չենք կրնար հատարակել այլևս:

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

—Ամիսներ առաջ երկու Հայեր Լօվէլէն Ռուսիայ գնացած էին քանի մը դմակաւոր ոչխարներ բերելու համար Ամերիկայ, զանոնք ի տես դնելու նպատակաւ: Կը լսենք թէ այդ պարոններն ոչխարներուն հետ Մարսիլիայ հասած են վերջերս, ու տեղական կառավարութիւնը ոչխարները վար դրած է: Հայք, որք Ամերիկացի քաղաքացիներ են, զիմուժ ըրած են Ամերիկեան դեսպանին:

—Անցեալ շաբթու Հայկական Կաճառը ընդհանուր նիստ մ'ունեցաւ Ս. Բարթոլոմէոսի կրօնատան մէջ ինչ ինչ ներքին դժուարութիւններ կարգադրելու համար:

—Հայ. Ե. Թանգարանի Միութեան լուր տրուած է որ իւր գրքերուն Ս. Բարթոլոմէոսի կրօնատան մէջ ինչ ինչ ներքին դժուարութիւններ կարգադրելու համար:

—Պատ. Հայկակ Սաղաթեան անցեալ օր լուցիկ մը վառած առնելով թիկնաթոռն պատահաբար բռնկեր ու ալ ձեռքնայրած է ծանրապէս:

—Անցեալ շաբթ օր հասան 20ի շափ նոր գաղթականներ, որոց մէջ է նաև Ջավազաթեան ընտանիքը: Տ. Ջավազաթեան Տիգրանակերտի առաջնակարգ դասատուներէն մին է, որուն աշակերտներն բազմաթիւ են Ամերիկայի մէջ:

—Արժ. Տ. Մաշթոց վարդապետ, շաբթուս մէջ, Օր. Պաշտօնէի գանձապետութեամբ կազմած որբախնամ առաջին եօթնի կողմէն 25 տղար դրկեց Ազգ. Պատրիարքարան, որով վարագալ որբանոցին մէջ որբ մը պիտի խնամուի Պաշտօնէի անուան տակ:

—Այս օրին լուսանկար պատկերն, տարիքը և այլ ուրիշ մանրամասնութիւններն պիտի գրուին խնամող «եօթն»ին:

—Փրօվիտէնի ընդհ. ժողովոյ յառաջիկայ նիստի մէջ նկատուութեան պիտի առնուի որբերու խնդիրը:

—Արժ. Տ. Մաշթոց վարդապետ Ս. Պատարագ Տատոյց, քարոզ խօսեցաւ և Զորքհնքի պաշտօն կատարեց Ս. Ռսկեբերան եկեղեցւոյն մէջ, անցեալ կիրակի օր:

—Լուսէլի Հայ Աւետարանական քարոզիչն Պատ. Սանդուկեան քարոզեց անցեալ կիրակի օր Ատրմի Մէմօրիլ Եկեղեցւոյ մատրան մէջ, ուր Հազարութեան պաշտամունք կատարուեցաւ:

—Փրօվիտէնի կը գրեն թէ Զորքհնքի օրն լարեպաշտ Հայ մը 20 տղար տուած է խաչի կնքահայրութեան համար, և այդ առթիւ իւրաքանչիւ նուիրատուութիւն մը սկսած է ժողովուրդի մէջ, որով գոյացած է 130 տոլար:

—Պ. Թովմաս Ջավազաթեան պիտի խօսի Հայոց, յառաջիկայ կիրակի օր, կէսօրէ վերջ, ի Տուսանէք հօլ, Ըսթիլիկ և Սըվոյ փողոցի անկիւնն, ի Ռէնսթ Հւարքն:

—Անցեալ կիրակի երեկոյ տեղի ունեցաւ ազատ լսարանի ժողովն ի Չիմի շօլ: Պ. Չիմեան խօսեցաւ «ընթացիկ և գերբնութեան» վրայ: Պ. Չարաֆեան ներկայ գտնուելով՝ հրաւիրուեցաւ նաև խօսիլ այդ երեկոյ: Պր. առնաբանն իրեն նիւթ ընտրեց «որբերու խնդիրն» որոյ վրայ ունկնդրաց խորին ուշադրութիւնն հրաւիրեց:

—Պատուելիք Սարկաւագեան, Պէննէսան և Սանդիկեան շաբթուս մէջ իրենց պաշտօնավարները գնացին: Պատ. Սարկաւագեան և Պէննէսեան նիւ Եօրք հրաւիրուած էին մասնաւորապէս՝ Ծննդի հանդիսին մէջ մաս առնելու համար:

—Անցեալ չորեքշաբթի երեկոյ շատ մը ծանօթ ազգայինք ժողով մ'ըրին դերասանական խումբ մը կազմելու համար: Սոքա նպատակ ունին թատերական ներկայացում մը տալ որբերուն ի նպաստ:

—Ռուսթըրի մէջ Սարգիս Սապայեան անուն Եղեգցի երիտասարդ մը իր մահկանացուն կնքեց անցեալ երկուշաբթի օր: Արժ. Տ. Մաշթոց վ. կանչուած է քաղաքէս՝ վաղը թաղուժը կատարելու համար:

—Քաղաքիս 27րդ Փողոցի թիւ 154 ճաշարանին մէջ անցեալներն կուր մը պատահած էր ճաշարանագետ Պ. Յորդանանի և Մամուլեան անուն երիտասարդի մը մէջ սեղ, անսեղի պատճառով մը համար: Մամուլ թէյ-յի երկաթեայ ամանով ճաշարանագետի գլուխ պատռած ըլլալով՝ ձերբակալուած էր ոստիկանութեան կողմէ: Թէև ի սկզբան ջանքեր եղան խնդիրն «քաղցր տեղը կապելու», բայց կարելի չըլլալով համաձայնութիւն մը գոյացնել՝ դատարանին մընաց արդարութիւնը գործադրել:

—Մամուլեան այժմ բանտարկուած կը մնայ «Թումպա» հնչակաւոր բանտին մէջ:

—Այս երեկոյ Արժ. Մաշթոց վ. և հոգաբարձութեան առնակալան Ա. Թավաճեան Պիլքըֆ Փօթըրի այցելութեան պիտի երթան՝ Հայերու համար մի ուրիշ եկեղեցի խնդրելու, և Հայ որբերու խնդրոյն վրայ խօսնու համար: Կէս գիշերի կառավարով Արժ. Մաշթո վարդապետ Ռուսթըր պիտի երթայ:

—Մեզ կը գրուի հետեւեալն հըրատարակութեան համար: «Մասնաւորապէս պատուական «Տիգրիս»-ի հիւրանկալ էջերում կուգամք մեր շնորհակալութիւնը յայտնել քաղաքիս գաղթականութեան ծանօթ Տօթթ. Այվազեանին, որը, իմ հիւանդութեան սկզբից մինչեւ վերջը, գրեթէ ամեն օր այցելեց թէ ինձ և թէ անպաշտպան լքած ընտանիքիս, վերստուգել նորա ամենահրաժեշտ պահանջները և գոհացնել նորա կարիքները:»

ԸՆԾԱՆԻՔԻ ՀԱՅՐԸ

Հայ. նկարիչ Պ. Երկանեանի նիւ Եօրք գալուստ առթիւ, Տիկին Կ. Կիւլպէնեան մի փառաւոր երեկոյթ տուաւ հօթէլ Սան Բէմօյի մէջ. Սըրահն գարգարուած էր Արեւելեան ճաշակաւ, որոյ կիցն մի ուրիշ սենեակի մէջ ի տես դրուած էին պատույ հիւրին՝ Պ. Երկանեանի շատ մը իւրաներկ պատկերներն, ի մէջ այլոց «Հասկաքաղը» որ վիճակահանութեան դերուած էր:

ՎԵՐՁԻ ԾՆԵՆԻՆԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Այս երեկոյթին ներկայ էին երկուսեւ բազմութիւն մը Հայերու և Ամերիկացիներու, որոց մէջ կրնանք մասնաւորապէս յիշել Տիար և Տիկին Հիւրմիւր, Տիար և Տիկին Ալէսն և Քուստր, Տիար և Տիկին Տատրեան, Օր. Մանկասարանի, Տքթ. Սիւնի, Տքթ. Այվազեան և այլք:

Ամերիկացի հիւրերու մասնաւոր ուշադրութիւնն գրաւած էր Հայ տիկնիկներու և պարոններու Արեւելեան ու մանաւանդ Հայկական հագուստներն. ինչպէս նաև Արեւելեան եղանակներն որք նուազուեցան Հայերու կողմանէ: Այս մասին յիշատակութեան արժանի են Տիկ. Կիւլպէնեանի նուագած մի քանի եղանակներն որք ընդհանուր ընդունելութիւն գտան: Երեկոյթի փակումէն անմիջապէս վերջ տեղի ունեցաւ Պ. Երկանեանի «Հասկաքաղ» վիճակահանութիւնն, Տիկին Կիւլպէնեանի հովանաւորութեան տակ: Բազմաւոր թիւը կը գտնուէր Փրօֆ. Ա. Լամպէր-

տի քով, որ Տիկին Կիւլպէնեանի միւղիքի դասատուն է:

Այս երեկոյթի իր բոլոր կարգադրութեամբ Տիկին Կիւլպէնեանի նուրը ճաշակին համար մի նոր և կենդանի ապացոյց էր յաշս Հայոց և Օտարազգաց:

ՅՈՒՑԱԿ ԵՒ ԻՌԻՒՍՏՈՒՑ Ի ՆՊԱՍՏ ԾԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ. ԵԿԵՂ. Ի ՈՒՆԵՍԹ ՀՊՊՈՒՐՆ

Արժ. Տ. Վահրամ Բէ.	§ 2.00
Կիւլպէնեան Եղաբարք	53.00
Տ. Մ. Շաթրեան	16.00
Տքթ. Պատմաճեան և Նաճառեան	16.00
Հ. Էկիւնեան	15.00
Մ. Գարէնֆիլեան	15.00
Պ. Չանգալեան	12.00
Պ. Թանէգըրմազեան	12.00
Յ. Մանուկեան	12.00
Տքթ. Գ. Սիւնի	10.00
Կ. Չանգալեան	10.00
Գումար	173.00

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Լօնտոնէն հաստծ վերջին հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռուսիայ Պարսկաստանի մէջ սկսած է քաղաքական ոտնձգութիւններ ընել. Շահի երկրին մէջ մեծ մտահոգութիւն կը տիրէ. Ռուսիա Թէհրանի և Իսպահանի Հայերու հետ քաղաքի յարաբերութեան մտած է՝ անոնց ձեռքով զէնք ներմուծելու համար նոյն քաղաքներու մէջ:

Անգլիական զբաւուր մը Պէլուճըսթան շոքեանք բռնելով գրաւած է անոր մէջ գտնուած պատերազմական ռազմամթերք, որոնք Լօնտոնէ Պարսկաստան կը դրկուին եղեր Ռուսական գործակալներու ձեռամբ:

Տէյլի Թէյլի կրօնի վիճակագիր թղթակիցը կը հեռագրէ թէ Ռուսական սահմանադիր մօտ Հայ գիւղեր կողոպտուած են ջուրներ:

ԹՈՒՐԳԻՍ ՊԱՏԵՐԱՍՏԻ ԿԸՊԱՏՐԱՍՏՈՒՐ

Սթանտարտի Կ.Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ թէ, պատերազմական նախարար Ռիզա փաշան հրաման ստացած է 80 նոր զօրագունդներ կազմելու համար, որոնք Ռուսիայի մէջ պիտի ծառայեն: Պուլկարիոյ ընթացքը անհանգստութիւն կը պատճառէ, և Դուռը բողոքներ ըրած է Սօֆիայի կառավարութեան:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԱՏ ԼՍԱՐԱՆ

Կիրակնօրեայ ազատ լսարանի գումարումն տեղի պիտի ունենայ Կիրակի երեկոյ ժամը ճիշդ 7.30ին Չիմի Գօրնըր Հօլի մէջ. 57 Ուէսթ 25րդ Փողոց, վեցերորդ Աքիլի անկիւնն: Պ. Գր. Չարաֆեան պիտի խօսի նիւթ ունենալով «Հայ գաղթականութիւնը և մեր որբերն»: Պ. Գ. Զիմեան պիտի խօսի նիւթ ունենալով «Հաւատք և գիտութիւն»:

Տիկնայք և Տիարք կը հրաւիրուին ներկայ գտնուիլ այն օգտաւէտ ատենաբանութեանց: Հիմնադիրք ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԱՏ ԼՍԱՐԱՆԻ

ԱԶԴ

Մեծն Ներսէսի Ողբերգութեան գիրքը կամ ուրիշ Հայ ողբերգութեան գիրք մը ով որ ունի կը խնդրենք 10 օրուայ համար մեզ զըրկեն որ օրինակներ. ծախքը կը վճարենք: Հայ որբերուն ի նպաստ ներկայացում մը տալու մտադրութիւն կայ:

ՂԻԿԸ ՏԻԳՐԻՍԻ ԽԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ:

ՆԱԻ ԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ ԵՐԷԿ ՀԱՍՏԱԾ ԼՕՎԵՍԹՔԵՆ Անվերսէն, Այսօր գալիք Նիւ Եօրք, Վաղը գալիք Վաղը գալիք Լա Պրիթաներ — Համպէր:

